


ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱՂԻՎՈՂ
ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ

1. Թեմայի վերնագիրը. «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը»
 2. Ծածկագիրը. 01-SCI-2017
 3. Թեմայի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր. № ShSU 01-SCI-2017, «01» մարտի 2017 թ.
 4. Հաշվետու ժամանակահատվածը. «01» IX. 2018 թ.-ից «31» XI. 2018 թ.
 5. Կազմակերպության անվանումը, որտեղ իրականացվում է թեման. Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան
 6. Թեմայի ղեկավարի
ազգանունը, անունը, հայրանունը. Մարտիրոսյան Լ. Ս.
հեռախոսը. 055 77 03 99
էլեկտրոնային փոստի հասցեն. mlevon2003@mail.ru
 7. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները. 900 000 ՀՀ դրամ
 8. Թեմայի ղեկավարի ստորագրությունը. 
- «10» դեկտեմբերի 2018 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Շիրակի պետական համալսարանի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնում իրականացվող «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» գիտահետազոտական թեմայի աշխատանքները յոթերորդ եռամսյակում սկսվել են 2018թ. սեպտեմբերի 1-ից:

Հաշվետու ժամանակահատվածում, աշխատանքային խմբի կողմից կատարվել է հետազոտվող տարածքի (ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզեր) ջրային ռեսուրսների գնահատման վերաբերյալ գրականության ուսումնասիրություն: Ներկայումս գոյություն ունեն ջրային ռեսուրսների ռեկրեացիոն գնահատման բազմաթիվ մեթոդներ [1; 2], նկատի ունենալով այս հանգամանքը, աշխատանքային խմբի կողմից առավել բարձր արդյունավետություն և հետազոտման արդյունքների մեծ ճշգրտություն ապահովելու համար ուսումնասիրվել են արդեն գոյություն ունեցող մեթոդները ինչպես նաև մշակվել է դաշտային աշխատանքների պլանը:


Ներկայումս զբոսաշրջության զարգացման բարձր ցուցանիշների համատեքստում կարևորվում է ներքին և ներգնա զբոսաշրջային հոսքերի ակտիվացումը, որոնք մեծ մասամբ ուղղված են լինում դեպի բնությունը: Նկատի ունենալով այս հանգամանքը մեր կողմից, ծրագրի շրջանակներում նախատեսվում է գնահատել Հայաստանի հյուսիսային երեք մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) ջրային ռեսուրսների ռեկրեացիոն-զբոսաշրջային հնարավորությունները:

Հետազոտվող շրջանի ջրային ռեսուրսները հիմնականում գետերն են, այդ պատճառով էլ կատարված աշխատանքները գլխավորապես ուղղված են գետային ցանցի հետազոտմանը և գետերի զբոսաշրջային-ռեկրեացիոն հնարավորությունների բացահայտմանը:

Հետազոտվող տարածքում գետերը հիմնականում լեռնային բնույթի են, չնայած որոշ գետեր, իրենց հսանքի տարբեր մասերում ունեն տարբեր բնույթ: Լեռնահարթավայրային բնույթ ունի Դեբեդը, հարթավայրային-լեռնային բնույթ ունեն Չորագետը և փամբակը: Նման բնույթի է նաև Ախուրյանը:

Ընդհանուր առմամբ հետազոտվող տարածքում գետային ցանցը առավել զարգացած է Կուրի ավազանում, որն աչքի է ընկնում խոնավ կլիմայական

պայմաններով և խորը մասնատվածությամբ: Ախուրյանի ավազանում արիդ կլիմայական պայմանների պատճառով գետային ցանցը համեմատաբար թույլ է զարգացած: Գետահովիտների առավել լիարժեք գնահատման համար, մեր կողմից հետազոտվել է նաև հովիտների ձև, քանի որ կարևոր է զբոսաշրջիկների անցանելիության համար: Առանձնացվել են երկու տիպի գետահովիտներ U-աձև և V-աձև:




Նկ. 1 Հյուսիսային Հայաստանի (Շիրակ, Լոռի, Տավուշ) գետահովիտների տիպաբանական քարտեզը.

Ջրագրական ցանցի աղքատությունը կարող է պայմանավորված լինել նաև հրաբխային կառույցներով, որոնք ունեն ինֆիլտրացիայի մեծ գործակից: Ընդհանուր առմամբ, գետային ցանցը ավելի լավ է զարգացած բարձրլեռնային շրջաններում, ընդ որում, հատկապես 2500-2700մ բարձրությունները [3, էջ 45]:

Գետահովիտների լայնական կտրվածքների ձևաբանության հիման վրա կազմվել է ուսումնասիրվող տարածքի գետերի հովիտների տիպաբանական քարտեզը, որը սխեմատիկորեն ներկայացված է նկար 1-ում:

Համեմատելով գետերի պրոֆիլները կարելի է ասել, որ վերին հոսանքներում դրանք հիմնականում V-աձև են, իսկ ստորին հոսանքում U-աձև:

Հետազոտական աշխատանքների ընթացքում, մեր կողմից ուսումնասիրվել են Հյուսիսային Հայաստանի գետերի հովիտների ընդլայնական կտրվածքները, քանի որ հովտի ձևով կարող է պայմանավորված լինել դրա ռեկրեացիոն-զբոսաշրջային նշանակությունը: Ներկայումս գետահովիտներով են անցնում շատ տրանսպորտային ուղիներ, բացի այդ, գետահովիտները իրենք իրենցից ներկայացնում են հետաքրքրություն զբոսաշրջիկների համար և շատ հետիոտն երթուղիներ անցնում են գետահովիտներով: Միաժամանակ, պայմանավորված գետահովտի գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով, այն կարող է ծառայել, որպես օբյեկտ զբոսաշրջության որոշ տեսակների համար (լեռնագնացություն, ժայռամագլցում, էքստրեմալ տուրիզմ և այլն):



Նկ. 2 Հյուսիսային Հայաստանի գետահովիտների ընդլայնական կտրվածքի անցկացման վայրերը:

Ուսումնասիրվող տարածքի գետերի հովիտների լայնական կտրվածքների կազմման համար կիրառվել է ArcGIS 10.4.1 ծրագրային համակարգը: Գետահովիտների լայնական կտրվածքների կազմման համար որպես ռելիեֆի թվային հիմք ծառայել է SRTM30 արբանյակային հանույթի միջոցով կազմված ռելիեֆի թվային մոդելը: ArcGIS


ծրագրային միջավայրում գետերի հովիտների լայնական կտրվածքների կազմման համար կիրառվել է 3D Analyst գործիքների փաթեթը, որի միջոցով անցկացվել են հիմնական կտրվածքները: Նկար 2-ում բերված են կտրվածքների անցկացման հիմնական կետերը:

Անցկացվել են ընդհանուր թվով 54 լայնական կտրվածքներ, որոնք ներկայացված են Նկար 2-ում:


Նկար 3-ում պատկերված է Ախուրյան գետի հովտի ընդլայնական կտրվածքը Գորշաբերդի հատվածում: Վերջինիս վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ այն հարմար է ինչպես տրանսպորտային, այնպես էլ հետիոտն զբոսաշրջային երթուղիների անցկացման համար: Հովտի հատկապես աջափնյա լանջը մեղմաթեք է, որով էլ կարելի է անցկացնել երթուղիները:

Լուսանկար 4-ում պատկերված է Ախուրյան գետի պրոֆիլը Կապս բնակավայրի մոտակայքում: Այս հատվածում, գետահովիտը իրենից ներկայացնում է ուղղորդ պատերով կիրճ, որը դժվար անցանելի է: Տեղամասը առավել հարմար է արկածային զբոսաշրջության, ինչպես նաև ժայռամագլցման և ալպինիզմի համար:


Լուսանկար 5-ում պատկերված է Փամբակի հովիտը Վանաձորից ներքև (№ 30): Վերջինս ունի համեմատաբար մեղմաթեք լանջեր, որոնք գրեթե ամբողջովին անտառապատ են: Գետահովտի ձախ լանջի թեքությունը անցնում է 30°-ից, ինչը դժվարացնում է հետիոտն տեղաշարժը, բայց այն կարելի է օգտագործել ժայռամագլցման համար: Հովտի աջ լանջը ավելի մեղմաթեք է,



Նկ.3 Գորշաբերդի տեղամասի կտրվածքը




Նկ. 4 Կապսի տեղամասի կտրվածքը



Նկ.5 Վանաձորի տեղամասի կտրվածքը

մասամբ դարավանդավորված, ինչը հեշտացնում է հետիոտն անցումը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Փամբակ գետի հովիտը միջին հոսանքում նպաստավոր է զբոսաշրջության և ռեկրեացիայի համար:

Սույն հաշվետվության մեջ ներառել ենք ևս մեկ գետահովտի վերլուծություն, ինչը առավել լիարժեքությամբ ցույց կտա հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից կատարված աշխատանքի ծավալը՝ ըստ երեք մարզերի:



Նկ.6 Իջևանի տեղամասի կտրվածքը

Լուսանկար 6-ում պատկերված է Աղստև գետի հովտի ընդլայնական կտրվածքը: Այս հատվածում գետը աչքի է ընկնում լայն հովտով, որի լանջերը մեղմաթեք են և գրեթե ամբողջովին անտառապատ: Գետահովիտը հարմար է ինչպես հետիոտն երթուղիների, այնպես էլ տրանսպորտային հաղորդակցության համար: Ինչպես աջ, այնպես էլ ձախ լեռնալանջերը հնարավորություն են տալիս իրականացնելու վերելք, ոչ սպորտային զբոսաշրջային խմբերի համար: Աղստևը այս հատվածում ունի բավականին լայն հուն և զարնանային վարարումների ժամանակ շատ հարմար է ռաֆտինգի կազմակերպման համար:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից հետազոտվել և գնահատվել են նաև Հյուսիսային Հայաստանի (Շիրակ, Լոռի, Տավուշ) լճերը և ջրամբարները: Պետք է ասել, որ ուսումնասիրվող տարածքը աղքատ է լճերով: Նկատի ունենալով այդ հանգամանքը մեր կողմից որպես հետազոտման օբյեկտ ընտրվել են արհեստական ջրամբարները, որոնք առավել մեծ թիվ են կազմում Շիրակի մարզում: Գնահատումը իրականացվել է ջրասպորտային ռեկրեացիայի համար, քանի որ լողափային հանգստի պայմանները բավարար չեն [4, էջ՝ 62], իսկ որոշ ջրամբարներում սահմանված կարգով լողալն արգելվում է:

Ջրասպորտային հանգստի կազմակերպման համար ջրային օբյեկտները գնահատվում են ըստ հանգստի ձևի: Հաշվի առնելով Հյուսիսային Հայաստանի ջրային օբյեկտների չափը և բնական պայմանները, կարելի է ասել, որ հետազոտվող տարածքում կարելի է զարգացնել առազաստանավային սպորտը, իսկ ձմռանը սառցակալվող ջրավազանների վրա՝ ձմեռային սպորտաձևերը (բուերային սպորտ):

բացի այդ Հյուսիսային Հայաստանի ջրամբարները և լճերը կարող են օգտագործվել նաև սիրողական ձկնորսության համար:

Չափանիշ	Բարենպաստության աստիճանը		
	Բարենպաստ (3 բալ)	Համեմատաբար բարենպաստ (2 բալ)	Անբարենպաստ (1 բալ)
Ջրամբարի մակերեսը	≥ 200 հա	100–200 հա	≤ 100 հա
Ալեբախությունը	≤ 3 բալ	3–4 բալ	≥ 4 բալ
Քամիների առկայությունը	≤ 5 մ/վրկ	5–15 մ/վրկ	≥ 15 մ/վրկ
Օդի ջերմաստիճանը	–10–15°C	–5–10°C, –10–15°C	0–5°C, –15–20°C
Սառցածածկույթի հաստությունը	≥ 40 սմ	30–40 սմ	≤ 30 սմ

Աղյուսակ 1: Ջրասպորտային հանգստի համար բնական պայմանների գնահատման ցուցանիշները

Այս դեպքում խոսքը փոքր առազաստանավերի մասին է, որոնց ջրանստվածքը չի գերազանցում 2մ: Բացի զգալի խորությունից, նման հանգստի կազմակերպման համար պահանջվում է մեծ ջրային մակերես (ավելի քան 200հա):

Ջրամբարը (լիճը)	Մակերեսը	Ալեբախությունը	Չկնորսություն	Քամիների ուժի մը	Օդի ջերմաստիճանը	Սառցածածկույթի հաստությունը	Ընդամենը (բալ)
Ախուրյանի ջր.	3	3	3	2	3	1	15
Արփի լճի ջր.	3	3	3	2	2	3	16
Կառնուտի ջր.	2	3	2	2	2	1	12
Մանթաշի ջր.	2	3	2	2	3	3	15
Թավշուտի ջր.	2	3	2	2	2	3	14
Մառնաղբյուրի ջր.	2	3	2	2	2	1	12
Վարդաբարի ջր.	1	3	2	2	2	1	11
Պարզ լիճ	1	3	2	2	3	1	14

Աղյուսակ 2 Հյուսիսային Հայաստանի ջրային օբյեկտների ռեկրեացիոն գնահատումը ջրատրանսպորտային հանգստի կազմակերպման նպատակով

Նման սպորտաձևերի զարգացման համար կարևոր նախապայման է քամիների առկայությունը, ինչպես նաև դրանց արագությունը: Ընդ որում, բավականին ուժեղ քամիների առկայությունը ցանկալի է ինչպես ամռանը, այնպես էլ ձմռանը՝ ձմեռային ռեկրեացիայի կազմակերպման համար:

Մեր կողմից օդերևութաբանական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ քամիների ռեժիմը և արագությունը (3-10մ/վրկ) նպաստավոր են նշված սպորտաձևերի զարգացման համար [5]:

Ձմեռային հանգստի կազմակերպման համար կարևոր նախապայման է սառցածածկույթի հաստությունը, որն առավել նպաստավոր է 2000մ և ավելի բարձրություններում գտնվող ջրամբարների համար:

Կատարված հետազոտական աշխատանքների արդյունքում կարելի է նշել, որ Հյուսիսային Հայաստանում գտնվող ինչպես բնական, այնպես էլ արհեստական ջրային օբյեկտներն ունեն ռեկրեացիոն միջինից բարձր արժեք:

Հյուսիսային Հայաստանի ջրային օբյեկտներում կարելի է կազմակերպել և զարգացնել սպորտային հանգստի որոշ ձևեր, փոքր առազաստանավային սպորտը, թիավարությունը, բուերային սպորտը, սիրողական ձկնորսությունը և այլն:

Ներկայացված գնահատումը թույլ է տալիս ասելու, որ առավել բարձր միավորները ստացել է Արփի լիճը 16 (առավելագույնի 89%), ամենացածր հնարավորությունները գրանցվել են Վարդաքարի ջրամբարում 11 բալ (առավելագույնի 61%):

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Հյուսիսային Հայաստանի ջրային ռեսուրսները նպաստավոր են ռեկրեացիայի և զբոսաշրջության զարգացման համար:

Կատարված դաշտային և կամերալ հետազոտությունների նյութերի հիման վրա հեղինակային խմբի կողմից գրվել է գիտական հոդված, որը ներկայացվելու է հանրապետության առաջատար գիտական ժողովածուներից մեկում՝ տպագրության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Колотова Е. В. Рекреационное ресурсоведение. РМАТ, М. 1999, 135 с.
2. Севастьянова С.В. Эколого-экономическая оценка рекреационных ресурсов. СПб, 2008, 190 с.
3. Հայկական ՄՍՀ ջրագրությունը: ՀՄՍՀ ԳԱ հրատ. Ե. 1981թ., 178 էջ:
4. Մարտիրոսյան Լ.Մ. Շիրակի մարզի ջրային օբյեկտների ռեկրեացիոն-էկոլոգիական գնահատումը: ԵՊՀ Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, Ե. 2015, № 2:
5. Справочник по климату СССР. Вып. 16. Ветер. Л. 1967.

6.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

h/h	Անվանումը	Ֆինանսավորման ծավալը (ՀՀ դրամ)
1	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը	900 000
2	Այլ ծախսեր, այդ թվում՝	-
	սարքեր և նյութեր	-
	գործուղումներ	-
Ընդամենը՝		900 000

Թեմայի ղեկավար՝

(ստորագրություն)

Մարտիրոսյան Լ. Ս.
(Ս.Ս.Հ.)

ՇՊՀ գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն)

Ռաֆֆի Քալաջյան
(Ս.Ս.Հ.)


«10» դեկտեմբերի 2018 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Աշխատանքի վարձատրության հոդվածով 900 000 ՀՀ դրամը՝ ներառյալ եկամտային հարկը, ստացվել են թեմայում ընդգրկված աշխատակիցների կողմից՝ ըստ իրենց հաստիքային աշխատավարձերի:
2. Մարքեր և նյութեր՝ 0 դրամ:
3. Գործուղումներ՝ 0 դրամ:

Թեմայի ղեկավար՝ _____

ստորագրություն



«10» դեկտեմբերի 2018 թ.